ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 4. 1952 Общественные науки

Վ. Պարսամյան

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՈՐՊԵՍ ԱԶԳ ԿԱԶՄԱՎՈՐՎԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ*

Հայ ժողովրդի՝ որպես ազգ կազմավորվելու հարցը, մեր նոր պատմության հիմնական պրոբլեմներից մեկն է։ Առանց այդ հարցի գիտական-մարքսիստական լուսաբանության, անհնարին կլինի ճիշտ ըմբռնել կապիտալիզմի և իմպերիալիզմի էպոխայի մեր պատմության մի շարք հանգուցային հարցերը։

Հայ բուրժուական պատմագրությունը, ինչպես մեր ժողովրդի պատմական զարգացման ողջ պրոցեսի, այնպես էլ նրա՝ որպես ազգի կազմավորման ուսումնասիրության հարցում, դրսևորել է իր լիակատար սնանկությունը՝ նույնացնելով ժողովուրդ և ազգ հասկացողությունները, համարելով ազգը ոչ թե պատմական, այլ հավերժական մի կատեգորիա։

Ազգերի կազմավորման հարցը, որպես ազգային հարցի բաղկացուցիչ մի մասը, առաջին անգամ իր բազմակողմանի և ճշմարիտ լուսաբանությունն է գտել մարքս-լենինյան գիտության մեջ։

Մարքսը, Էնգելսը, Լենինը և Ստալինը մշակելով պրոլետարիատի ռևոլուցիոն պայքարի թեորիայի ու պրակտիկայի հարցերը, կապիտալիստական կարգերը ռևոլուցիոն ճանապարհով խորտակելու և սոցիալիստական կարգեր հաստատելու պատմական պրոցեսի օրինաչափությունները, միաժամանակ ամբողջական ուսմունք ստեղծեցին նաև ազգային հարցի մասին։

Մարքս-լենինյան ուսմունքը ազգային հարցի մասին իր հետագա զարգացումը գտավ հատկապես ընկեր Ստալինի «Մարքսիզմը և ազգային հարցը», «Ազգային հարցը և լենինիզմը», «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» հանճարեղ աշխատություններում, որոնք հանդիսանում են ստեղծագործական մարքսիզմի կլասիկ օրինակներ։

Ընկեր Ստալինի այդ և մյուս աշխատություններում սպառիչ լուսաբանություն են գտել բուրժուական և սոցիալիստական ազգերի կազմավորման, ազգային-ազատագրական և ազգային-ռեակցիոն շարժումների, ազգային հարցի թեորիայի ու պրակտիկայի հետ կապված բոլոր հարցերը։

Ընկեր Ստալինի աշխատությունները լույս են սփռում նաև հայ բուրժուական և սոցիալիստական ազգերի կազմավորման վրա, ուստի, այդ լույսի տակ, փորձենք ցույց տալ, թե **երբ և ինչպես է կազմավորվել հայ բուրժուական ազգը:**

Նախքան հայ ազգի կազմավորմանն անցնելը, տեսնենք, թե ինչ է ազգը։

«Ազգը,—ասում է ընկեր Ստալինը,—մարդկանց պատմականորեն կազմավորված կայուն ընդհանրությունն է, որ ծագել է լեզվի, տերիտորիայի, տնտեսական կյանքի և կուլտուրայի ընդհանրության մեջ դրսևորվող հոգեկան կերտվածքի ընդհանրության բազայի վրա»[1]։

---

* *Տպագրվում է մտքերի փոխանակության կարգով։ Խմբ.։*

[1] *Ի. Վ. Ստալին, Երկեր, հ. 2, էջ 346։*

Ընկեր Ստալինը ընդգծում է, որ ազգի այս հատկանիշներից և ոչ մեկը, առանձին վերցրած, բավական չէ ազգ կազմելու համար։ «Դեռ ավելին,— ասում է նա,— բավական է այդ հատկանիշներից թեկուզ և մեկի բացակայությունը, որ ազգը դադարի ազգ լինելուց»[1]։ «Միայն միասին վերցրած բոլոր հատկանիշների առկայությունն է մեզ ազգ տալիս»[2]։

Այնուհետև, խոսելով ազգի, որպես պատմական կատեգորիայի մասին, ընկեր Ստալինը ասում է. «Ազգը, ինչպես և ամեն մի պատմական երևույթ, ենթակա է փոփոխման օրենքին, ունի իր պատմությունը, սկիզբն ու վերջը»[3]։

Բուրժուական ազգերի առաջացումը ընկեր Ստալինը կապում է ֆեոդալիզմի լիկվիդացման և կապիտալիզմի զարգացման հետ, ինչպես սոցիալիստական ազգերինը՝ սոցիալիստական ռևոլուցիայի հաղթանակի հետ։

«Ազգը ոչ թե սոսկ մի պատմական կատեգորիա է, այլ որոշ դարաշրջանի, բարձրացող կապիտալիզմի դարաշրջանի պատմական կատեգորիա։ Ֆեոդալիզմի լիկվիդացման ու կապիտալիզմի զարգացման պրոցեսը միաժամանակ մարդկանց որպես ազգեր կազմավորվելու պրոցեսն է»[4]։

Տալով ազգի կլասիկ բնորոշումը, նրա առաջացման կոնկրետ պատմական պայմանները, այնուհետև ընկեր Ստալինը մի շարք երկրների օրինակով պարզաբանում ու հիմնավորում է իր դրույթները։ Բերելով Վրաստանի օրինակը, ընկեր Ստալինը գրում է.

«Նախառեֆորմյան ժամանակների վրացիները ապրում էին մի ընդհանուր տերիտորիայում և խոսում էին մի լեզվով, բայց և այնպես, խիստ ասած, նրանք մի ազգ չէին կազմում, որովհետև նրանք բաժանված լինելով մի ամբողջ շարք միմյանցից կտրված իշխանությունների, չէին կարող ընդհանուր տնտեսական կյանքով ապրել, դարերով պատերազմներ էին մղում միմյանց դեմ և ավերում էին միմյանց...

Վրաստանը, որպես ազգ երևան եկավ միայն 19-րդ դարի երկրորդ կեսին, երբ ճորտատիրության անկումը և երկրի տնտեսական կյանքի աճումը, հաղորդակցության ճանապարհների զարգացումը և կապիտալիզմի առաջացումը աշխատանքի բաժանում հաստատեցին Վրաստանի մարզերի միջև, վերջնականապես խախտեցին իշխանությունների տնտեսական պարփակվածությունը և նրանց շաղկապեցին որպես մեկ ամբողջություն»[5]։

Անմիջականորեն Վրաստանին վերաբերող՝ ընկեր Ստալինի այս մտքերը, կարևոր նշանակություն ունեն նաև Անդրկովկասի հար և նման սոցիալ-տնտեսական պայմաններում ապրող հարևան ժողովուրդների՝ հայերի ու ադրբեջանցիների որպես ազգ կազմավորվելու հարցի լուսաբանության համար։

Պատմական ժամանակագրական տեսակետից ֆեոդալիզմի քայքայման և կապիտալիզմի զարգացման շրջանը Վրաստանում՝ հիմնականում համընկնում է Հայաստանի ու Ադրբեջանի կապիտալիստական զարգացման շրջանի հետ։ Սեր կարծիքով, կապիտալիզմի զարգացման պրոցեսն Անդրկովկասում, իր որոշ առանձնահատկություններով հանդերձ, ընդհանուր մի միասնական պրոցես է, սերտորեն կապված ռուսական կապիտալիզմի հետ և հազիվ թե կարելի

---

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հ. 2, էջ 347։
[2] Նույն տեղում։
[3] Նույն տեղում, էջ 346 - 347։
[4] Նույն տեղում, էջ 354։
[5] Նույն տեղում, էջ 344—345։

լինի ժամանակագրական տեսակետից մեծ տարբերություն նշել Հայաստանի, Ադրբեջանի ու Վրաստանի միջև։ Այնպես որ, հայերը, վրացիները և ադրբեջանցիները ոչ թե տարբեր էպոխաներում, այլ միաժամանակ, 19-րդ դարի երկրորդ կեսին են թևակոխել կապիտալիզմի շրջանը։ Ճիշտ է, Անդրկովկասի առևտրա-արդյունաբերական կենտրոններում (Բաքու, Թիֆլիս, Բաթում) համեմատաբար ավելի ուժեղ էր հայ բուրժուազիան, բայց դրա հետ մեկտեղ նա շատ ավելի թույլ էր Հայաստանում։ Ուստի այդ հանգամանքը չէր կտրող ինչ որ առանձնահատուկ պայմաններ ստեղծել հայ ազգի կազմավորման համար։ Եվ քանի որ այդ այդպես է, ապա պետք է ընդունել, որ ինչպես վրացիները, այնպես էլ հայերը որպես ազգ կազմավորվել են 19-րդ դարի երկրորդ կեսին։

19-րդ դարի երկրորդ կեսից հայ ժողովրդի պատմության մեջ սկսվում է նոր շրջան՝ ֆեոդալիզմից կապիտալիզմի անցման շրջանը։ Այս, իհարկե, չի նշանակում, թե կապիտալիզմը հայ իրականության մեջ սկիզբ է առել 19-րդ դարի կեսերին։ Կապիտալիզմի էլեմենտները, ինչպես ամենուրեք, այնպես էլ հայ իրականության մեջ ծագել են ու զարգացել դեռևս ֆեոդալական հասարակակարգի ծոցում։ Հայտնի է, որ 16-րդ դարից սկսած հայ առևտրական կապիտալը աշխույժ գործունեություն էր ծավալել ոչ միայն Հայաստանում ու Անդրկովկասում, այլև Թյուրքիայում ու Պարսկաստանում, որն իր ժամանակի հետամնաց ֆեոդալական կարգերում, անկասկած, պրոգրեսիվ երևույթ էր։

19-րդ դարի սկզբից սկսվում է Անդրկովասի միացումը Ռուսաստանին, որն ավարտվում է 1828 թվականի Թուրքմենչայի պայմանագրով։ Անդրկովկասի միացումը Ռուսաստանին, չնայած ցարիզմի նվաճողական, գաղութարար քաղաքականության, օբեկտիվորեն պրոգրեսիվ խոշոր նշանակություն ունեցավ Անդրկովկասի ժողովուրդների տնտեսական, քաղաքական և կուլտուրական կյանքի զարգացման համար։ Ազատագրվելով հետամնաց ֆեոդալական Թյուրքիայի ու Պարսկաստանի լծից և կապվելով արդեն իսկ կապիտալիզմի ուղու վրա կանգնած Ռուսաստանի հետ, Անդրկովկասի ժողովուրդները ևս կանգնեցին զարգացման նոր, կապիտալիստական ուղու վրա։ Դա քաղաքական, տնտեսական և կուլտուրական մի խոշոր քայլ էր Անդրկովկասի ժողովուրդների պատմական զարգացման ճանապարհին։

19-րդ դարի սկզբներից գնալով ավելի ու ավելի սերտ կապեր են հաստատվում Ռուսաստանի ու Անդրկովկասի միջև։ Նոր թափ է ստանում առևտրի, արհեստների ու արդյունագործության, ինչպես և լեռնարդյունաբերության զարգացումը։ Դանդաղ, բայց նկատելի փոփոխություններ են կատարվում նաև գյուղատնտեսության բնագավառում։ 1830—1840 թվականներին Անդրկովկասում անցկացված վարչական և տնտեսական ռեֆորմները (Կովկասի փոխարքայության հիմնումը 1844 թ., 1846 թ. դեկտեմբերի 6-ի և 14-ի օրենքները և այլն), որոնց նպատակն էր ամրապնդել ցարիզմի գաղութային ռեժիմը և նրա սոցիալական հենարանը Անդրկովկասում, նոր պայմաններ ստեղծեցին տեղական շահագործող դասակարգերի և ցարիզմի ազգային-գաղութային ճնշման դեմ ուղղված դասակարգային ու ազգային ազատագրական պայքարի սրման համար։ Վրաստանում և Հայաստանում 1830—1840-ական թվականներին տեղի ունեցած գյուղացիական շարժումները այդ պայքարի արտահայտություններն էին։

19-րդ դարի 50—60-ական թվականներին Հայաստանի և Անդրկովկասի սոցիալ-տնտեսական կյանքում նոր տեղաշարժեր են կատարվում։ Ֆեոդալա-

կան հարաբերությունների ծոցում զարգացող կապիտալիզմի էլեմենտները թևակոխում են իրենց հաղթանակի շրջանը։ Ֆեոդալական հարաբերություններ-ը հիմանականում տեղի են տալիս կապիտալիստական հարաբերություններ-ին։ Անդրկովկասը մտնում է իր կապիտալիստական զարգացման փուլը։ Այս շրջանից սկսած ավելի ու ավելի է աճում կապիտալիզմը գյուղատնտեսության մեջ, գյուղացիության քայքայման, պաուպերիզացիայի ու պրոլետարիզացիայի պրոցեսը։ Ռուսաստանից և Արևմտյան Եվրոպայից ներմուծվող ֆաբրիկա-գործարանային ապրանքները հետզհետե դուրս են մղում արհեստի արտադրանքը, որի հետևանքով քայքայվում են համքարությունները։ Աշխուժանում են փոխանակային կապերը առանձին շրջանների միջև, զարգանում են հաղորդակցության միջոցները, ներքին և արտաքին առևտուրն ու արդյունաբերությունը, աճում է քաղաքային բնակչությունը և այլն։

Անդրկովկասի սոցիալ-տնտեսական կյանքում կատարվող այս տեղաշարժերը մի կողմից արդյունք էին երկրի ներքին զարգացման, իսկ մյուս կողմից ռուսական և արտասահմանյան կապիտալի ազդեցության։

Վ. Ի. Լենինը «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» աշխատության մեջ խոսելով Կովկասի մասին, ցույց է տալիս, թե ինչպես ռուսական կապիտալիզմը Կովկասը ներգրավելով իր ոլորտի մեջ, համահարթում էր նրա հինավուրց նահապետական փակվածության մնացորդ հանդիսացող տեղական առանձնահատկությունները։ «Իր տեղում արդեն խոսել ենք այն մասին,—գրում է Լենինը,—որ Եվր. Ռուսաստանի հարավային ու արևելյան ծայրերկրներ-ը, որոնք բնակեցվում էին հետռեֆորմյան դարաշրջանում, աչքի են ընկնում հենց մատնանշված գծերով և, տնտեսագիտական իմաստով, կենտրոնական Եվր. Ռուսաստանի գաղութներն են հանդիսանում։ Գաղութի այս հասկացողությունն է՛լ ավելի հարմարում է մյուս ծայրերկրներին, օրինակ՝ Կովկասին։ Նրա տնտեսական «նվաճումը» Ռուսաստանի կողմից շատ ավելի ուշ է կատարվել, քան քաղաքականը, իսկ տնտեսական այս նվաճումը լիովին չի ավարտված մինչև այժմ էլ։ Հետռեֆորմյան դարաշրջանում մի կողմից Կովկասը սաստիկ գաղութացման էր ենթարկվում, գաղութականները մեծ չափերով հերկում էին հողերը (առանձնապես Հյուսիսային Կովկասում), արտադրելով վաճառքի համար ցորեն, ծխախոտ և այլն ու մեծ թվով գյուղական վարձու բանվորներ գրավելով Ռուսաստանից։ Մյուս կողմից՝ տեղի էր ունենում բնիկ դարավոր «տնայնագործական» արհեստագործությունների արտամղումը, որոնք Մոսկվայից ներմուծվող ֆաբրիկատների մրցման հետևանքով ընկնում էին։ Ընկնում էր զենքի հինավուրց արտադրությունը՝ Տուլայից ու Բելգիայից ներմուծվող ապրանքների մրցման շնորհիվ, ընկնում էր երկաթի տնայնագործական մշակումը՝ ներմուծվող ռուսական արտադրանքի մրցման շնորհիվ, նմանապես ընկնում էր պղնձի, ոսկու և արծաթի, կավի, ճարպի և սոդայի, կաշիների տնայնագործական մշակումը և այլն. այս բոլոր արդյունքներն ավելի էժան էին արտադրվում ռուսական գործարաններում, որոնք իրենց ապրանքները Կովկաս էին ուղարկում։ Ընկնում էր եղջյուրներից գավաթներ պատրաստելը՝ Վրաստանի ֆեոդալական կարգի և նրա պատմական խնջույքների կործանման հետևանքով. ընկնում էր գլխարկի արհեստագործությունը՝ ասիական զգեստը եվրոպականով փոխարինելու հետևանքով. ընկնում էր տկերի ու կարասների արտադրությունը տեղական գինու համար, որն առաջին անգամ էր վաճառքի հանվում (զարգացնելով տակառագործական արտադրու-

թյունը) և իր հերթին նվաճում էր ռուսական շուկան։ Այսպիսով, ռուսական կապիտալիզմը Կովկասը ներգրավում էր համաշխարհային ապրանքային շրջանառության մեջ, համահարթում էր հինավուրց նահապետական ինքնամփոփվածության մնացորդ հանդիսացող նրա տեղական առանձնահատկությունները, իր գործարանների համար շուկա էր ստեղծում։ Հետռեֆորմյան ժամանակաշրջանի սկզբին նոսր բնակավորված կամ լեռնականներով բնակավորված երկիրը, որոնք համաշխարհային տնտեսությունից և նույնիսկ պատմությունից դուրս էին կանգնած, դառնում էր նավթարդյունաբերողների, գինու առևտուր անողների, ցորենի ու ծխախոտի ֆաբրիկանտների երկիր, և պարոն Կտրոնն անգթորեն հանում էր հպարտ լեռնականի վրայից նրա բանաստեղծական ազգային զգեստը և զարդարում էր եվրոպական լակեյի զգեստով (Դլ. Ուսպենսկի)։ Կովկասի ուժեղ գաղութացման պրոցեսին ու նրա հողագործական բնակչության արագ աճմանը զուգընթաց տեղի էր ունենում նաև բնակչության հողագործությունից կտրվելու և արդյունաբերությանը հարելու պրոցես (որը վարագուրվում էր հողագործական բնակչության աճումով)։ Կովկասի քաղաքային բնակչությունը 1863 թվականին 350 հազարից աճեց մինչև մոտ 900 հազարի՝ 1897 թվականին (Կովկասի ամբողջ բնակչությունը 1851 թ. մինչև 1897 թ. աճեց 95 տոկոսով)»[1]։

Ընկեր Ստալինը նույնպես քանիցս նշել է ռուսական և արտասահմանյան կապիտալի դերը Անդրկովկասի կապիտալիստական հարաբերությունների զարգացման գործում։ Հասկանալի է, երբ խոսում ենք կապիտալիզմի զարգացման մասին Անդրկովկասում, ապա այդ երբեք չի կարելի կտրել ռուսական կապիտալիզմից, առանց որի Անդրկովկասում կապիտալիզմը զարգանալ չէր կարող։ 1864—65 թթ. Վրաստանում և 1870 թ. Հայաստանում ու Ադրբեջանում անցկացված գյուղացիական ռեֆորմը եկավ միայն նպաստելու կապիտալիզմի զարգացմանը և ոչ թե վճռական դեր խաղաց ֆեոդալիզմից կապիտալիզմին անցնելու գործում, ինչպես տրամադիր են կարծել որոշ հեղինակներ։

Եվ այսպես, ետռեֆորմյան շրջանում, Ռուսաստանում կապիտալիզմի բուռն զարգացման պայմաններում ու նրա ազդեցության տակ Անդրկովկասը ևս ներգրավվում է կապիտալիստական զարգացման ոլորտի մեջ։ Ձևավորվում են կապիտալիստական հասարակակարգի հիմնական անտագոնիստական դասակարգերը՝ բուրժուազիան և պրոլետարիատը, կազմավորվում են բուրժուական ազգերը։

Անդրկովկասում կապիտալիզմի զարգացումը և բուրժուական ազգերի կազմավորումը տեղի էր ունենում ցարիզմի գաղութային տիրապետության պայմաններում։ Այդ պատճառով էլ այստեղ ոչ միայն դանդաղ ընթացավ կապիտալիզմի զարգացումը և երկար պահպանվեցին ֆեոդալական հարաբերությունների մնացորդները, այլև ազգերը կազմավորվեցին, չկարողանալով ստեղծել իրենց ազգային պետությունը։

«Մարքսիզմը և ազգային հարցը» աշխատության մեջ ընկեր Ստալինը խոսելով Արևելյան Եվրոպայում ուշացած կերպով ձևավորված բուրժուական ազգերի մասին, գրում է. «Մինչդեռ Արևմուտքում ազգերը զարգանալով՝ պետություններ են կազմել, Արևելքում կազմավորվել են ազգամիջյան պետու-

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 3, էջ 769—772, ընդգծումն իմն է—Վ. Գ.։

թյուններ, մի քանի ազգություններից բաղկացած պետություններ։ Այդպես են Ավստրո-Հունգարիան, Ռուսաստանը... Ռուսաստանում ազգություններին միավորողի դերն ստանձնեցին վելիկոռուսները, որոնց գլխավորում էր պատմականորեն կազմավորված հզոր ու կազմակերպված ազնվական զինվորական բյուրոկրատիան։

Բանն այդպես է տեղի ունեցել Արևելքում։

Պետությունների գոյացման այդ յուրահատուկ եղանակը տեղի ունենալ կարող էր միայն դեռևս չլիկվիդացված ֆեոդալիզմի պայմաններում, թույլ զարգացած կապիտալիզմի պայմաններում, երբ հետին պլանը մղված ազգությունները դեռ տնտեսապես չէին կարողացել կոնսոլիդացվել որպես ամբողջական ազգեր։

Բայց կապիտալիզմն սկսում է զարգանալ նաև արևելյան պետություններում։ Զարգանում են առևտուրը և հաղորդակցության ճանապարհները։ Առաջ են գալիս խոշոր քաղաքներ։ Ազգերը տնտեսապես կոնսոլիդացվում են։ Ետ մղված ազգերի հանգիստ կյանքի մեջ ներխուժած կապիտալիզմը խռովահույզ է անում այդ ազգություններին և շարժման մեջ է դնում նրանց։ Մամուլի և թատրոնի զարգացումը, Ռայխսրատի (Ավստրիայում) և Դումայի (Ռուսաստանում) գործունեությունը նպաստում են «ազգային զգացմունքների» ուժեղացմանը։ Ծնունդ առած ինտելիգենցիան տոգորվում է «ազգային իդեայով» և հենց այդ ուղղությամբ էլ գործում է...

Բայց ինքնուրույն կյանքի արթնացած՝ ետ մղված ազգերը արդեն չեն կազմավորվում որպես անկախ ազգային պետություններ. նրանք իրենց ճանապարհին ամենաուժեղ դիմադրության են հանդիպում վաղուց արդեն պետության գլուխ կանգնած իշխող ազգերի ղեկավար խավերի կողմից։ Ուշացե՞լ են...

Այդպես իբրև ազգեր կազմավորվում են չեխերը, լեհերը և այլն Ավստրիայում. խորվաթները և մյուսները Հունգարիայում. լատիշները, լիտվացիները, ուկրաինացիները, վրացիները, հայերը և ուրիշները Ռուսաստանում։

Ինչպես դժվար չէ նկատել, այստեղ ընկեր Ստալինը սեղմ կերպով, պարզ ու հստակ, տվել է մի շարք բուրժուական ազգերի, այդ թվում և հայ ազգի կազմավորման պատկերը։ Ցարիզմի ազգային-գաղութային ճնշման պայմաններում, երբ, ինչպես ընկեր Ստալինն է ասում, փոքր ժողովուրդների նմատմամբ ցարիզմի քաղաքականությունը, կալվածատերերի ու բուրժուազիայի քաղաքականությունն այն էր, որ «սպանեն նրանց մեջ ամեն մի պետականության սաղմեր, խեղեն նրանց կուլտուրան, ճնշեն լեզուն, տգիտության մեջ պահեն նրանց, և վերջապես ըստ հնարավորության ռուսացնեն նրանց»[1], բնական է, այդ ժողովուրդները, դրանց թվում և հայ ժողովուրդը, չէին կարող կազմավորվել որպես անկախ ազգային պետություններ։ Այդ պատճառով էլ, հետռեֆորմյան շրջանում ռուսական կայսրության մեջ հայ ազգը կազմավորվեց առանց ազգային պետության։

Հայ ազգի կազմավորման համար, այս տեսակետից, շատ ավելի աննպաստ պայմաններ կային Թյուրքիայում։

Հայտնի է, որ Հայաստանի տերիտորիայի և հայ ժողովրդի մի զգալի մասը գտնվում էր Թյուրքիայի տիրապետության տակ. 16-րդ դարից սկսած Թյուրքերը նվաճելով Հայաստանի Արևմտյան շրջանները, դաժան կերպով

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հ. 2, էջ 334—336։
[2] Ի. Վ. Ստալին, Երկեր, հ. 3, էջ 27։

ճնշում, կողոպտում ու ֆիզիկական բնաջնջման էին ենթարկում հայ աշխատավորությանը։ «Թուրքական ասիմիլատորները,— ասում է ընկեր Ստալինը,— բոլոր ասիմիլատորներից ամենադաժանները,— հարյուրավոր տարիներ խոշտանգում և խեղում էին բալկանյան ազգերին, բայց նրանք ոչ միայն չկարողացան ոչնչացնել այդ ազգերին, այլև հարկադրված եղան տեղի տալու... Պարսկական ու թուրքական ասիմիլատորները հարյուրավոր տարիներ ծվատում, խոշտանգում ու բնաջնջում էին հայ և վրացի ազգերին, բայց նրանք ոչ միայն չկարողացան ոչնչացնել այդ ազգերին, այլ— ընդհակառակը—հարկադրված եղան նույնպես տեղի տալու»[1]։

Թյուրքիան գտնվելով «ֆեոդալիզմի ամենացածր և բարբարոսական ստադիայում» (Կ. Մարքս), արգելակում էր ինչպես իր լծի տակ գտնվող բալկանյան սլավոն ժողովուրդների, այնպես և հայ ժողովրդի տնտեսական, քաղաքական և կուլտուրական առաջընթացը։ Չնայած դրան, 19-րդ դարի երկրորդ կեսին Արևմտյան Հայաստանում ևս, ճիշտ է շատ դանդաղ, բայց և այնպես ֆեոդալական հարաբերությունները հետզհետե տեղի էին տալիս կապիտալիստական հարաբերություններին, արևմտահայերի մեջ նույնպես ազգային կոնսոլիդացիայի պրոցես էր տեղի ունենում։

Արևմտահայերի տևական, հերոսական պայքարը թյուրքական լծից ազատագրվելու և արևելահայ եղբայրների հետ միանալու ուղղությամբ, հաջողությամբ չավարտվեց։ Մնալով Թյուրքիայի լծի տակ, գտնվելով իրենց գաղութարար թաթը Թյուրքիայի վրա դրած անգլիական, ֆրանսիական, գերմանական և ամերիկյան գիշատիչ իմպերիալիզմի ճիրաններում, արևմտահայերը կանգնեցին տնտեսական, քաղաքական և կուլտուրական զարգացման փակուղու առաջ։ Արևմտահայերի արդարացի պայքարը երկրի տնտեսական զարգացման և իրենց տնտեսական դրության բարելավման համար, իրենց ազատության ու անկախության, ազգային կրթության ու լուսավորության, քաղաքական, կուլտուրական ինքնուրույն կյանք ստեղծելու համար, հանդիպեց ոչ միայն թյուրքական բարբարոս ասիմիլատորների, այլև արևմտաեվրոպական «քաղաքակիրթ» գաղութարարների կատաղի դիմադրությանը, որի հետևանքով էլ արևմտահայերը ոչ միայն չկարողացան ուշացած կերպով սկսված իրենց ազգային կազմավորման պրոցեսն ավարտել և ազգային անկախություն ձեռք բերել, այլև կորստյան վտանգի տակ դրվեց նրանց հայրենիքը, նրանց կյանքն ու գոյքը, որը և իրականացվեց երիտասարդ թյուրքերի կառավարության կողմից, անգլո-ամերիկյան, գերմանական և ֆրանսիական իմպերիալիստների օժանդակությամբ։

Այսպիսով, ինչպես տեսնում ենք՝

ա) Հայ ժողովուրդը որպես ազգ կազմավորվում է 19-րդ դարի երկրորդ կեսում, Անդրկովկասում և Հայաստանում կապիտալիզմի զարգացման շրջանում։

բ) Հայ ազգի կազմավորման պրոցեսը տեղի է ունենում պատմական ուրույն պայմաններում, Ռուսաստանի և Թյուրքիայի տիրապետության ներքո, սոցիալ-տնտեսական և կուլտուրական տարբեր միջավայրում, մի հանգամանք, որը չէր կարող իր կնիքը չդնել ազգության կազմավորման պրոցեսի վրա։

գ) Հայ ազգի կազմավորման օրրանը; փաստորեն, հանդիսացել է Արևելյան

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հ. 11, էջ 395։

Հայաստանը կամ Ռուսահայաստանը, այդ գործը իրենց վրա էին վերցրել արևելահայերը։

Այժմ մի քանի խոսք ազգի տարրերի կազմավորման մասին։

«Ազգային հարցը և լենինիզմը» աշխատության մեջ ընկեր Ստալինը առարկելով այն սխալ տեսակետի դեմ, թե ազգերը ծագել և գոյություն են ունեցել դեռ կապիտալիզմից առաջ, ասում է, որ «չեն եղել և չէին կարող լինել ազգեր մինչկապիտալիստական ժամանակաշրջանում, քանի որ դեռևս չկային ազգային շուկաներ, չկային ո՛չ տնտեսական, ո՛չ կուլտուրական ազգային կենտրոններ, հետևապես չկային այն գործոնները, որոնք վերացնում են տվյալ ժողովրդի տնտեսական մանրատվածությունը և այդ ժողովրդի մինչև այդ բաժան-բաժան մասերը քաշում հավաքում են մեկ ազգային ամբողջության մեջ»[1]։

Ընկեր Ստալինը ցույց է տալիս, թե ինչպես չպետք է շփոթել ազգի առանձին տարրերի կազմավորումը, ազգի կազմավորման հետ։ «Իհարկե,—գրում է ընկեր Ստալինը,— ազգի տարրերը— լեզուն, տերիտորիան, կուլտուրական ընդհանրությունը և այլն— երկնքից չեն ընկել, այլ ստեղծվել են կամաց-կամաց, դեռ մինչկապիտալիստական ժամանակաշրջանում»[2]։

Ընկեր Ստալինի այս խոսքերը լիովին վերաբերում են նաև հայ ազգի կազմավորմանը։ Երբ մենք ասում ենք, թե հայ ժողովուրդը որպես ազգ կազմավորվել է 19-րդ դարի երկրորդ կեսին, կապիտալիզմի ժամանակաշրջանում, այդ դեռ չի նշանակում, թե մինչ այդ ազգ կազմող տարրերը գոյություն չեն ունեցել։

Վերցնենք ազգության գլխավոր հատկանիշներից մեկը՝ լեզուն։

Հայոց լեզուն, ինչպես հայտնի է, ծագել է կապիտալիզմից շատ առաջ, պատմական վաղ ժամանակաշրջանում։ «Լեզուն,—ասում է ընկեր Ստալինը,— արդյունք է մի ամբողջ շարք դարաշրջանների, որոնց ընթացքում նա ձևավորվում է, հարստանում, զարգանում, հղկվում»[3]։ Հայոց լեզուն նույնպես ապրել է զարգացման երկարատև մի պրոցես, որը սերտորեն կապված է եղել հայ ժողովրդի՝ այդ լեզվի ստեղծողի, պատմական զարգացման ողջ պրոցեսի հետ։ Հայաստանի տնտեսական, քաղաքական և կուլտուրական զարգացումը ոչ միայն հիմք է հանդիսացել մեր լեզվի մշակման ու հարստացման համար, այլև իր բազմակողմանի արտահայտությունն է գտել նրա մեջ։

«Լեզուն,—գրում է ընկեր Ստալինը,—մարդու արտադրական գործունեության հետ կապված է անմիջականորեն, և մարդու ոչ միայն արտադրական գործունեության, այլև ամեն մի այլ գործունեության հետ, նրա աշխատանքի բոլոր ոլորտներում, արտադրությունից մինչև բազիսը, բազիսից մինչև վերնաշենքը... մարդու գործունեության բոլոր բնագավառներն ընդգրկող լեզվի գործողության ոլորտը շատ ավելի լայն ու բազմակողմանի է, քան վերնաշենքի գործողության ոլորտը։ Ավելին, այն համարյա անսահման է»[4]։

Ընկեր Ստալինը ցույց է տալիս, որ լեզուն անխզելիորեն կապված է հասարակության պատմության, ժողովրդի պատմության հետ։ Հայոց լեզուն նույնպես սերտորեն կապված է հայ ժողովրդի պատմության հետ և պատմա-

---

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հ. 11, էջ 382։

[2] Նույն տեղում, ընդգծումն իմն է—Վ. Պ.։

[3] Ի. Վ. Ստալին, Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը, էջ 18, Երևան, 1951 թ.։

[4] Նույն տեղում, էջ 23—24, ընդգծումն իմն է—Վ. Պ.։

կան կարևոր աղբյուր է հանդիսանում նրա համար։ Դժբախտաբար մեր պատմաբանները և հայոց լեզվի պատմությամբ զբաղվողները, հարկ եղած ուշադրությունը չեն դարձրել այդ հարցի վրա։ Մեր պատմաբանների ու լեզվաբանների առաջնահերթ խնդիրը պետք է լինի ընկեր Ստալինի լեզվաբանության վերաբերյալ աշխատությունների լույսի տակ ուսումնասիրել մեր ժողովրդի և մեր լեզվի պատմությունը, որպես տարբեր, բայց միմյանց հետ անխզելիորեն կապված երևույթներ։

Լեզուն որպես հաղորդակցության միջոց, ասում է ընկեր Ստալինը, միշտ եղել է և մնում է հասարկության համար միասնական և նրա անդամների համար ընդհանուր լեզու։ Հայոց լեզուն նույնպես մեր ժողովրդի զարգացման տարբեր էտապներում այդպիսի դեր է կատարել։ Հին և միջին դարերում՝ գրաբարը և միջին հայերենը, նոր և նորագույն ժամանակաշրջանում՝ աշխարհաբարը եղել են մեր ժողովրդի համար միասնական, ընդհանուր լեզու։ Դրանց հետ մեկտեղ գոյություն են ունեցել նաև բազմաթիվ տերիտորիալ բարբառներ։ 19-րդ դարի կեսերին՝ ֆեոդալիզմից կապիտալիզմի անցման ժամանակաշրջանում, երբ վերջապես հաղթանակով պսակվեց աշխարհաբար լեզվի երկարատև պայքարը գրաբար լեզվի դեմ, նա դարձավ տիրապետող, ընդհանուր լեզու։

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, հայ ժողովուրդը մինչև կապիտալիստական ֆորմացիային անցնելը, ուներ ընդհանուր լեզու, ինչպես որ ուներ ազգային կուլտուրայի սպեցիֆիկ առանձնահատկությունների մեջ դրսևորվող հոգեկան կերտվածքի ընդհանրություն և ընդհանուր տերիտորիա, մի ընդհանուր, միասնական Հայաստանի ըմբռնում, չնայած նրան, որ այդ տերիտորիան գտնվում էր օտար պետությունների տիրապետության տակ, Հայաստանը զուրկ էր ազգային անկախ պետական իշխանությունից։

Սակայն, հայ ազգի կազմավորման համար անհրաժեշտ այդ տարրերի առկայությունը իրենց ավելի կամ պակաս չափով զարգացած և կամ սաղմնային վիճակով, դեռևս բավական չէին ազգը, որպես այդպիսին, կազմավորելու համար։ Նշածս տարրերը մինչկապիտալիստական շրջանում առկա էին, օրինակ, նաև Վրաստանում։ Բայց, ինչպես հայտնի է, ընկեր Ստալինը մինչկապիտալիստական շրջանի վրացիներին ազգ չի համարում։

Հայ ժողովրդի՝ որպես ազգ կազմավորման համար անհրաժեշտ էր նաև տնտեսական կյանքի ընդհանրություն, որպես ազգի բնորոշ առանձնահատկություններից մեկը։ Մինչկապիտալիստական շրջանի Հայաստանում կա՞ր արդյոք տնտեսական կյանքի ընդհանրություն, ներքին տնտեսական կապ, որը ազգի տարբեր մասերը միավորեր մի ամբողջության մեջ։

Ֆեոդալիզմի պայմաններում Հայաստանում այդպիսի կապ չկար և չէր կարող լինել։ Ճիշտ է, դեռևս միջին դարերում, Բագրատունիների թագավորության շրջանում, Հայաստանի տնտեսական կյանքն սկսում է վերելք ապրել, զարգանում են առևտուրը, արհեստները, քաղաքները, ընդլայնվում են փոխանակային կապերը, բայց տնտեսական կյանքի, տնտեսական կապերի այդ զարգացումը սելջուկյան և հատկապես մոնղոլական ավերիչ արշավանքների հետևանքով ետ է մղվում։

Հայաստանի անկախության կորստից հետո — մոնղոլների, Թուրք-Թաթարական ցեղերի, Պարսկաստանի ու Թյուրքիայի տիրապետության ամբողջ ժամանակաշրջանում, ընդհուպ մինչև Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաս-

տանին, եթե նկատի չունենանք Կիլիկյան Հայաստանը, հայ ժողովրդի ինչպես քաղաքական, կուլտուրական, այնպես էլ տնտեսական կյանքի զարգացման համար ստեղծվել էին միանգամայն աննպաստ պայմաններ։ Արևելյան բարբարոս ցեղերի, ավատական, հետամնաց ֆեոդալական պետությունների տիրապետության պայմաններում Հայաստանի տնտեսական կյանքը չէր կարող զարգանալ ու կոնսոլիդացիայի ենթարկվել։

Հայաստանի տնտեսական կյանքի և, մասնավորապես, առևտրի մասնակի աշխուժացումը 17—18-րդ դարերում, հայ առևտրական կապիտալի ակտիվ մասնակցությունը Պարսկաստանի, Հնդկաստանի, Թյուրքիայի, Ռուսաստանի, Հոլանդիայի, Անգլիայի, Իտալիայի և մի շարք այլ երկրների հետ կատարվող առևտրին, չստեղծեցին և չէին էլ կարող ստեղծել ազգի կազմավորման համար անհրաժեշտ գործոններ։ Այդ ուղղությամբ միայն առաջին քայլերը կատարվեցին։

Ինչպես արդեն նշել ենք, միայն 19-րդ դարի առաջին կեսում, Ռուսաստանի տիրապետության տակ անցնելուց հետո, Հայաստանում և Անդրկովկասում ստեղծվեցին կապիտալիզմի զարգացման անհրաժեշտ նախադրյալները, որոնց հիման վրա, համառուսաստանյան մասշտաբով զարգացող կապիտալիզմի պայմաններում, Հայաստանը կանգնեց կապիտալիզմի ուղու վրա։

Ֆեոդալական հարաբերությունների քայքայման և կապիտալիզմի զարգացման պայմաններում էր, որ հայ իրականության մեջ հետզհետե ամրապընդվեցին ներքին տնտեսական կապերը, ստեղծվեցին առևտրա-արդյունաբերական կենտրոններ, ազգային շուկա, զարգացան հաղորդակցության ճանապարհները, լիկվիդացվեց տնտեսական պարփակվածությունը և այլն։ Բացի այդ, էլ ավելի զարգացան ու կոնսոլիդացիայի ենթարկվեցին ազգի մյուս տարրերը։ Լեզվի, գրականության ու արվեստի, գիտության, մամուլի, թատրոնի և ազգային կուլտուր-լուսավորական հաստատությունների զարգացումը 19-րդ դարի կեսերից մտավ նոր փուլի մեջ, ստեղծվեցին ազգային կուլտուրական կենտրոններ, բարձրացավ ժողովրդի ազգային ինքնագիտակցությունը։ Եվ եթե Ռուսաստանի հետ տնտեսական կապերի ամրապնդումը նպաստեց Հայաստանի տնտեսական կյանքի կոնսոլիդացիային, ապա ռուսական կուլտուրայի, փիլիսոփայական մտքի, հասարակական-քաղաքական շարժումների բարերար ազդեցության տակ նոր մղում ստացավ հայ ժողովրդի ազգային գիտակցության զարգացումը, ցարիզմի ու սուլթանիզմի դեմ մղվող ազգային-ազատագրական պայքարը։ Աբովյանի, Նալբանդյանի, Շահազիզի, Սունդուկյանի, Թումանյանի և ուրիշների օրինակները այդ պրոցեսի ցայտուն արտահայտություններն են։

19-րդ դարի կեսերին Ռուսաստանում և Արևմտյան Եվրոպայում ֆեոդալական հարաբերությունների դեմ ծավալված սուր պայքարի պայմաններում և նրա ազդեցության տակ հայ իրականության մեջ նույնպես ուժեղ պայքար սկսվեց ոչ միայն ֆեոդալական կարգերի, այլև ֆեոդալական գաղափարախոսության դեմ, եկեղեցու, հին լեզվի (գրաբարի), հին դպրոցի և բոլոր մյուս հին հաստատությունների դեմ, որոնք խոչընդոտ էին հանդիսանում կապիտալիզմի զարգացման համար։

Կապիտալիզմի տիրապետության հաստատման այս շրջանում է, որ հանդես է գալիս բուրժուազիան, իր ազգային-բուրժուական գաղափարախոսությամբ

ու ծրագրերով, սրվում է դասակարգային հակամարտությունները, հասարակական տարբեր հոսանքների պայքարը, աշխուժանում են ազգային-ազատագրական շարժումները ցարիզմի և հատկապես սուլթանիզմի դեմ և այլն։

Ահա, պատմական այս էպոխայում է, կապիտալիզմի էպոխայում, ազգի բոլոր տարրերի միասին վերցրած որպես մի ամբողջության առկայության պայմաններում, որ կազմավորվում է հայ բուրժուական ազգը։

Հայ բուրժուական ազգի կազմավորման պրոցեսը, ինչպես տեսանք, երկարատև պատմական մի պրոցես էր, կատարված սերնդից սերունդ, որն ավարտվեց 19-րդ դարի երկրորդ կեսին։

Ընկեր Ստալինը «Ազգային հարցը և լենինիզմը» աշխատության մեջ տալով բուրժուական և սոցիալիստական ազգերի իր հանճարեղ սահմանումները, ռուսական, ուկրաինական, թաթարական և վրացական բուրժուական ազգերի թվում նշում է նաև հայկականը[1]։ Ընկեր Ստալինի այդ նշումը ևս, պարզ ցույց է տալիս, որ մենք ունեցել ենք կազմավորված բուրժուական ազգ և ճիշտ չեն այն ընկերները, որոնք կարծում են, թե հայ ազգի կազմավորման պրոցեսը սկսվել է, բայց չի ավարտվել, որ հայերը ազգ չեն եղել, հակադրվելով այն սխալ տեսակետին, թե հայերը որպես ազգ կազմավորված են եղել հնագույն ժամանակներից սկսած։

Ինչպես բոլոր բուրժուական ազգերը, այնպես էլ հայ բուրժուական ազգը կազմավորվելով կապիտալիզմի շրջանում, իր զարգացումն ապրեց կապիտալիզմի ու իմպերիալիզմի էպոխաներում։

Բնութագրելով բուրժուական ազգերը, ընկեր Ստալինն ասում է, որ այդ ազգերի իդեական և սոցիալ-քաղաքական բագաժը հանդիսանում էր ազգի ներսում դասակարգային խաղաղության, «ազգի միասնության» քարոզը, ուրիշի տերիտորիաներ զավթելու ձգտումը, ազգային փոքրամասնություններին ճնշելը, իմպերիալիզմի հետ գործակցելը և այլն[2]։

Բուրժուական ազգերին հատուկ այդ գծերը դրսևորել է նաև հայ բուրժուական ազգը, հատկապես հայ բուրժուա-նացիոնալիստական պարտիաները։

Հայտնի է, որ հայ բուրժուազիան և նրա շահերի հավատարիմ պաշտպան կոնտրռևոլուցիոն դաշնակցությունը, իրենց գոյության ամբողջ ընթացքում հրահրել են բուրժուական նացիոնալիզմը՝ ընդդեմ ժողովուրդների բարեկամության և պրոլետարական ինտերնացիոնալիզմի, պաշտպանել են բուրժուական ռեակցիոն կուլտուրան՝ ընդդեմ դեմոկրատական, պրոգրեսիվ կուլտուրայի, ամեն կերպ աշխատել են խեղդել ազգի ներսում եղած դասակարգային պայքարը, օգտագործել են ժողովրդի ազգային-ազատագրական շարժումները իրենց շահերի համար, ծառայել են ցարիզմին և արևմտաեվրոպական իմպերիալիզմին՝ ընդդեմ սեփական երկրի բանվորների ու գյուղացիների, ճնշել են ազգային փոքրամասնություններին, անվստահություն և ատելություն սերմանել ժողովրդի մեջ դեպի ազգերը և այլն։

Հայ բոլշևիկները (Ստ. Շահումյան, Ս. Սաանգարյան, Ա. Միկոյան և ուրիշներ) Լենինի և Ստալինի գլխավորությամբ, միշտ էլ անհաշտ պայքար են

---

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր հ. 11, էջ 385։
[2] Նույն տեղում, էջ 384։

մղել հայ բուրժուազիայի և բուրժուական պարտիաների դեմ, նրանց բուրժուանացիոնալիստական գործին ու գաղափարներին հակադրելով ժողովուրդների բարեկամության, պրոլետարական ինտերնացիոնալիզմի, դասակարգային ու ազգային-ազատագրական պայքարի սկզբունքները, որպես ճիշտ սկզբունքներ՝ ժողովրդի ազատագրության, նոր, սոցիալիստական կյանք կառուցելու համար։

Բուրժուական ազգերի բախտը, ասում է ընկեր Ստալինը, կապված է կապիտալիզմի բախտի հետ, «կապիտալիզմի անկումով ասպարեզից պետք է դուրս գան այդպիսի ազգերը»[1]։

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլուցիայի հաղթանակից հետո մեզ մոտ բուրժուական ազգերի բազայի վրա զարգացան ու ձևավորվեցին սոցիալիստական ազգերը։ Այդ պրոցեսը տեղի ունեցավ նաև Հայաստանում, երբ 1920 թվականին հաղթանակեցին սովետական կարգերը։ Սովետական կարգերի հաստատումից հետո ասպարեզից դուրս մղվեց հայ բուրժուական ազգը և նրա տեղի բռնեց նոր, հայ սոցիալիստական ազգը, որի կազմավորման պրոցեսի քննությունը մեր խնդրից դուրս է։

Ունելով հայ բուրժուական ազգի կազմավորման հարցը և անելով մեր նախնական եզրակացությունները, մենք համոզված ենք, որ մեր պատմաբանները, փիլիսոփաները, լեզվաբանները, գրականագետները կարտահայտվեն այդ հարցի շուրջը և կոլեկտիվ ուժերով ավելի բազմակողմանի կլուսաբանվի մեր նոր պատմության այդ հանգուցային պրոբլեմներից մեկը։

В. Парсамян

К вопросу о формировании армянского народа в нацию

Резюме

В настоящей статье автор в свете работ классиков марксизма-ленинизма и в особенности классических трудов И. В. Сталина по национальному вопросу стремится проанализировать процесс формирования армянской буржуазной нации.

Товарищ Сталин указывает, что нация является исторической категорией, возникающей лишь в эпоху ликвидации феодализма и возникновения и развития буржуазных общественных отношений. „Процесс ликвидации феодализма и развития капитализма,—пишет он,—является в то же время процессом складывания людей в нации“[2].

В смысле исторической эпохи период разложения феодализма и развития капитализма в Армении в основном совпадает с соответствующим периодом в Грузии и Азербайджане. По мнению автора статьи, процесс развития капитализма в Закавказье, несмотря на его определенные своеобразные черты, в этих трех странах, является единым, общим процессом, тесно связанным с развитием капитализма в России.

Формирование армянской буржуазной нации происходило в своеобразных исторических условиях, под властью России и Турции,—стран, находившихся на

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հ. 11, էջ 385։
[2] И. В. Сталин, Сочинения, т. 2, стр. 303.

различных уровнях социально-экономической и культурной жизни. По этой причине, хотя она и сформировалась как нация, но не смогла создать свое независимое национальное государство. В условиях национально-колониального гнета в царской России, когда беспощадно уничтожался всякий зародыш государственности у подвластных народов, армянский народ, понятно, не мог создать своего национального государства.

В этом отношении для формирования армянской нации несравненно более неблагоприятными были условия в Турции. Справедливая борьба западных армян за экономическое развитие своей страны и улучшение своего материального положения, за свою свободу и независимость, за самостоятельную политическую и культурную жизнь встречала ожесточенное сопротивление не только со стороны турецких варваров—ассимиляторов, но и западно-европейских и американских „цивилизованных" колонизаторов. Благодаря этому у западных армян не только не завершился и без того поздно начавшийся процесс формирования нации, но и было поставлено под угрозу само существование армянского народа на армянских территориях, подвластных Турции. Доказательство этому—массовое уничтожение армян в Турции, особенно резни армян, проводившиеся младотурецким правительством по указке и при помощи англо-американских, немецких и французских империалистов.

Таким образом, армянский народ, оформившись как нация, не смог создать свое национальное государство. Колыбелью образования армянской нации стала Восточная (русская) Армения. И только при советской власти армянский народ получил возможность создания своего национального государства.

Говоря о том, что армянская нация сформировалась в эпоху капитализма, нельзя, конечно, упустить из виду, что отдельные элементы нации, например, общенациональный армянский язык, существовали задолго до этой эпохи. Но этих отдельных элементов было еще недостаточно для образования нации. Для этого была необходима также общность экономической жизни, чего не было и не могло быть в эпоху феодализма. Эта общность возникла только во второй половине XIX в., в условиях развития капитализма. Таким образом, только в эпоху капитализма, когда уже были налицо все элементы нации, формируется армянская буржуазная нация.

Характеристика буржуазных наций, данная товарищем Сталиным, целиком относится и к армянской буржуазной нации. Армянская буржуазия и ее руководящие буржуазно-националистические партии во все время своего существования также выступали с лживой проповедью за классовый мир внутри нации и „национальное единство"; они также культивировали буржуазный национализм против пролетарского интернационализма, защищали реакционную буржуазную культуру против демократической прогрессивной культуры, сеяли в народе недоверие и ненависть к другим нациям, служили царизму и западно-европейскому империализму, использовали национально-освободительные движения народа в своих узко-националистических интересах и т. д.

Армянские большевики (Шаумян, Спандарян, Микоян и другие) под руководством Ленина и Сталина всегда вели непримиримую борьбу против армянской буржуазии и буржуазных партий, их буржуазно-националистическим делам и идеям противопоставляя принципы пролетарского интернационализма, дружбы народов, классовой и национально-освободительной борьбы, как единственно правильные принципы для освобождения народа, для построения новой, социалистической жизни.

После Великой Октябрьской социалистической революции и установления советской власти в Армении на базе старой, буржуазной армянской нации развивается и формируется новая, социалистическая армянская нация.